ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՆԵՐԴՐՈՒՄՆԵՐԻ ԵՎ ՏԵՂԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳԻՐ

ՎԶՄԲ վարկ 8483-AM

ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ

ՀԱՏՈՒԿ ՆՊԱՏԱԿՆԵՐԻ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ԵՎ

ԱՆԿԱԽ ԱՈՒԴԻՏՈՐԻ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

2019թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա վերաբերյալ

ԵՐԵՎԱՆ
Հուլիս 2020

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Էջ

ՂԵԿԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ 3

ԱՆԿԱԽ ԱՈՒԴԻՏՈՐԻ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ 4

ԴՐԱՄԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՄՈՒՏՔԵՐԻ ԵՎ ՎՃԱՐՈՒՄՆԵՐԻ ՄԱՍԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ 7

ԸՍՏ ԾՐԱԳՐԻ ԲԱՂԱԴՐԻՉՆԵՐԻ ՖՈՆԴԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՄԱՍԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ 8

ՀԱՏՈՒԿ ՆՊԱՏԱԿՆԵՐԻ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ԿԻՑ ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ 9

ՀԱՎԵԼՎԱԾ 1. ԾՐԱԳՐԻ ԿՈՂՄԻՑ ՎՃԱՐՎԱԾ ԳՈՒՄԱՐՆԵՐԻ ԵՎ ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ԲԱՆԿԻ ՓՈԽՀԱՏՈՒՑՈՒՄՆԵՐԻ ՀԱՄԱԴՐՈՒՄ 19

ՂԵԿԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ
ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԵՎ ՆԵՐԿԱՅԱՑՄԱՆ ՀԱՄԱՐ

Հայաստանի Տարածքային Զարգացման Հիմնադրամի (ՀՏԶՀ) ղեկավարությունը պատասխանատու է 08.04.2015թ. կնքված ՎԶՄԲ Վարկ 8483-AM Վարկային Համաձայնագրով ֆինանսավորվող (Վարկային Համաձայնագիր) և Հայաստանի Տարածքային Զարգացման Հիմնադրամի (ՀՏԶՀ) կողմից իրականացվող "Սոցիալական Ներդրումների և Տեղական Զարգացման Ծրագրի" (Ծրագիր) հատուկ նպատակների ֆինանսական հաշվետվությունների պատրաստման համար, որը ճշմարիտ է ներկայացնում 2019թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա դրամական միջոցների մուտքերն և վճարումներն, ինչպես նաև ըստ բաղադրիչների ֆոնդերի օգտագործումը՝ համաձայն Հաշվապահների Միջազգային Դաշնության (ՀՄԴ) Հանրային Հատվածի Հաշվապահական Հաշվառման Միջազգային Ստանդարտների Խորհրդի (ՀՀՀՀՄՍԽ) կողմից հրապարակված «Ֆինանսական հաշվետվություններ հաշվապահական հաշվառման դրամային միջոցների սկզբունքով» ՀՀՀՀՄ ստանդարտի և Համաշխարհային Բանկի կողմից ֆինանսավորվող ներդրումային գործառնությունների Ֆինանսական Ձեռնարկի (ՀԲ ուղեցույց):

Հատուկ նպատակներով ֆինանսական հաշվետվությունները պատրաստելիս, ՀՏԶՀ-ի ղեկավարությունը պատասխանատու է.

- Հաշվապահական հաշվառման քաղաքականության պատշաճ ընտրության և կիրառման համար,
- Ներկայացնել տեղեկատվությունը, ներառյալ հաշվապահական հաշվառման քաղաքականությունը, այնպես որ այն լինի արժանահավատ, համադրելի ու հասկանալի,
- Ներկայացնել լրացուցիչ անհրաժեշտ տեղեկատվություն 31.12.2019թ.-ի վերաբերյալ:

ՀՏԶՀ-ի ղեկավարությունը նաև պատասխանատու է.

- Մշակելու, ներդնելու ու պահպանելու ներքին հսկողության արդյունավետ համակարգ,
- Կատարելու հաշվապահական հաշվառման պատշաճ գրանցումներ, որոնք բավարար են ներկայացնելու ու պարզաբանելու գործարքները, և որոնք հնարավորություն են տալիս հիմնավորել, որ հատուկ նպատակների ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են համաձայն «Ֆինանսական հաշվետվություններ հաշվապահական հաշվառման դրամային միջոցների սկզբունքով» ՀՀՀՀՄ ստանդարտի և ՀԲ ուղեցույցի,
- Ձեռնարկել հնարավոր միջոցներ Ծրագրի ակտիվների պահպանման նպատակով, և ապահովել, որ ֆոնդերն օգտագործվել են Վարկային Համաձայնագրում նշված պայմաններին և ՀԲ համապատասխան ուղեցույցներին համապատասխան՝ պատշաճ ուշադրություն դարձնելով տնտեսմանը և արդյունավետությանը, և միայն այն նպատակներով, որոնց համար հատկացվել են, և
- Կանխարգելել և բացահայտել խարդախությունը կամ այլ սխալները:

2019թ. դեկտեմբերի 31-ին ավարտվող տարվա հատուկ նպատակների ծրագրի ֆինանսական հաշվետվությունները հաստատվել և ստորագրվել են ՀՏԶՀ ղեկավարության կողմից 2020թ. հուլիսի 28-ին:

Արթուր Սողոմոնյան
Գործադիր տնօրեն

Լևոն Դուլյան
Ֆինանսավարչական տնօրեն

Հեռ.՝ +37460 528899
էլ.փոստ՝ bdo@bdoarmenia.am
www.bdoarmenia.am

ՀՀ, ք. Երևան
Դ. Ամիրյանի 23/6, 5-րդ հարկ, տարածք 7

ԱՆԿԱԽ ԱՈՒԴԻՏՈՐԻ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Ներկայացվում է Հայաստանի Տարածքային Զարգացման Հիմնադրամի ղեկավարությանը

Կարծիք

Մենք աուդիտի ենք ենթարկել 08.04.2015թ. կնքված ՎԶՄԲ Վարկ 8483-AM Վարկային Համաձայնագրով ֆինանսավորվող (Վարկային Համաձայնագիր) և Հայաստանի Տարածքային Զարգացման Հիմնադրամի (ՀՏԶՀ) կողմից իրականացվող "Սոցիալական Ներդրումների և Տեղական Զարգացման Ծրագրի" (Ծրագիր) հատուկ նպատակների ֆինանսական հաշվետվությունները, որոնք ներառում են 2019թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա դրամական միջոցների մուտքերի և վճարումների մասին հաշվետվությունը, ըստ բաղադրիչների ֆոնդերի օգտագործման մասին հաշվետվությունը, ինչպես նաև հատուկ նպատակների ֆինանսական հաշվետվություններին կից հաշվապահական հաշվառման քաղաքականության ամփոփը և այլ ծանոթագրությունները:

Մեր կարծիքով, կից հատուկ նպատակների ֆինանսական հաշվետվությունները բոլոր էական առումներով ճշմարիտ են ներկայացնում Ծրագրի 2019թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա դրամական միջոցների հոսքերը՝ համաձայն *"Ֆինանսական հաշվետվություններ հաշվապահական հաշվառման դրամային միջոցների սկզբունքով"* Հանրային Հատվածի Հաշվապահական Հաշվառման Միջազգային Ստանդարտի (ՀՀՀՀՄՍ-դրամային միջոցների սկզբունք):

Կարծիքի հիմք

Մենք աուդիտն իրականացրել ենք Հաշվապահների Միջազգային Դաշնության (ՀՄԴ) ներքո գործող Աուդիտի և Երաշխավորման Միջազգային Ստանդարտների Խորհրդի (ԱԵՄՍԽ) կողմից հրապարակված Աուդիտի միջազգային ստանդարտներին (ԱՄՍ-ներին) համապատասխան: Այդ ստանդարտներից բխող մեր պատասխանատվությունը լրացուցիչ նկարագրված է սույն հաշվետվության «Աուդիտորի պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար պարբերությունում:
Մենք անկախ ենք Ծրագրից և ՀՏԶՀ-ից՝ համաձայն Հաշվապահների Էթիկայի միջազգային ստանդարտների խորհրդի կողմից հրապարակած Պրոֆեսիոնալ հաշվապահի էթիկայի կանոնագրքի (ՀԷՄՍԽ կանոնագիրք), և պահպանել ենք էթիկայի այլ պահանջները՝ համաձայն ՀՄԷՍԽ կանոնների: Մենք համոզված ենք, որ ձեռք ենք բերել բավականաչափ ու համապատասխան աուդիտորական ապացույցներ՝ մեր կարծիքն արտահայտելու համար:

Հանգամանքի շեշտադրում – Դրամային միջոցների սկզբունք

Առանց ձևափոխելու մեր կարծիքը, Ձեր ուշադրությունն ենք հրավիրում ֆինանսական հաշվետվություններին կից ծնթ. 2-ին, որտեղ ներկայացված է, որ այս ֆինանսական հաշվետվությունները պատրաստված են դրամային միջոցների սկզբունքով, որի պատճառով, այս հաշվետվությունները կարող են չհամապատասխանել այլ նպատակներով օգտագործման համար:

ԲԻԴԻՕ Արմենիա ՓԲԸ-ն հանդիսանում է գրիտանական ԲԻԴԻՕ Ինթերնեյշնլ Լիմիթեդ ընկերության անդամ և ԲԻԴԻՕ անկախ ընկերությունների միջազգային ցանցի անդամ:

Հանգամանքի շեշտադրում – Հետագա դեպքեր

Առանց ձևափոխելու մեր կարծիքը, Ձեր ուշադրությունն ենք հրավիրում ֆինանսական հաշվետվությունների ծնթ. 11.2-ի վրա, որը նկարագրում է հաշվետու ամսաթվից հետո COVID-19 համավարակի հնարավոր ազդեցությունը Ծրագրի վրա:

Ղեկավարության պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների համար

ՀՏՁՀ-ի ղեկավարությունը պատասխանատու է ՀՄԴ-ի Հանրային Հատվածի Հաշվապահական Հաշվառման Միջազգային Ստանդարտների Խորհրդի (ՀՀՀՀՄՄԽ) կողմից հրապարակված ՀՀՀՀՄՄ-դրամային միջոցների սկզբունքի և Համաշխարհային Բանկի կողմից ֆինանսավորվող ներդրումային գործառնությունների Ֆինանսական Ձեռնարկի (ՀԲ ուղեցույց) համաձայն հատուկ նպատակների ֆինանսական հաշվետվությունների պատրաստման և ճշմարիտ ներկայացման համար և այնպիսի ներքին հսկողության համար, որը, ղեկավարության կարծիքով, անհրաժեշտ է՝ խարդախության կամ սխալի հետևանքով էական խեղաթյուրումներից զերծ ֆինանսական հաշվետվությունների պատրաստումն ապահովելու համար:

Աուդիտորի պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար

Մեր նպատակն է ձեռք բերել ողջամիտ հավաստիացում առ այն, որ հատուկ նպատակների ֆինանսական հաշվետվությունները բոլոր էական առումներով զերծ են էական խեղաթյուրումներից, անկախ դրանց՝ խարդախության կամ սխալի հետևանքով առաջացած լինելու հանգամանքից, և ներկայացնել մեր կարծիքը ներառող աուդիտորի եզրակացություն:
Ողջամիտ հավաստիացումը բարձր մակարդակի հավաստիացում է, սակայն այն չի երաշխավորում, որ ԱՄՄ-ներին համապատասխան իրականացրած աուդիտը միշտ կհայտնաբերի բոլոր էական խեղաթյուրումները, երբ նրանք առկա են: Խեղաթյուրումները կարող են առաջանալ խարդախության կամ սխալի արդյունքում և համարվում են էական, երբ խելամտորեն կարող է ակնկալվել, որ դրանք՝ առանձին կամ միասին վերցրած, կազդեն հատուկ նպատակների ֆինանսական հաշվետվություններն օգտագործողների՝ այդ հաշվետվությունների հիման վրա կայացվող տնտեսական որոշումների վրա:
ԱՄՄ-ների համաձայն իրականացրած աուդիտի ողջ ընթացքում մենք կիրառում ենք մասնագիտական դատողություններ և պահպանում մասնագիտական կասկածամտություն:

Ի լրումն՝

- հատկորոշում և գնահատում ենք խարդախության կամ սխալի հետևանքով հատուկ նպատակների ֆինանսական հաշվետվությունների էական խեղաթյուրման ռիսկերը, նախագծում և իրականացնում ենք աուդիտորական ընթացակարգեր՝ այդ ռիսկերին արձագանքելու նպատակով և ձեռք ենք բերում աուդիտորական ապացույցներ, որոնք բավարար և համապատասխան հիմք են հանդիսանում մեր կարծիքի համար: Խարդախության հետևանքով առաջացած էական խեղաթյուրման չհայտնաբերման ռիսկն ավելի բարձր է, քան սխալի հետևանքով էական խեղաթյուրման չհայտնաբերման ռիսկը, քանի որ խարդախությունը կարող է ներառել հանցավոր համաձայնություն, զեղծարարություն, միտումնավոր բացթողումներ, սխալ ներկայացումներ կամ ներքին հսկողության համակարգի շրջանցում,

BDO

- ձեռք ենք բերում աուդիտին վերաբերող ներքին հսկողության մասին պատկերացում՝ տվյալ հանգամանքներին համապատասխան աուդիտորական ընթացակարգեր նախագծելու, և ոչ՝ Ընկերության ներքին հսկողության արդյունավետության վերաբերյալ կարծիք արտահայտելու համար,
- գնահատում ենք հաշվապահական հաշվառման կիրառված քաղաքականության տեղին լինելը, ինչպես նաև ղեկավարության կողմից կատարված հաշվապահական գնահատումների և կից բացահայտումների խելամտությունը,
- գնահատում ենք ֆինանսական հաշվետվությունների ընդհանուր ներկայացումը, կառուցվածքը և բովանդակությունը, ներառյալ՝ բացահայտումները, ինչպես նաև ֆինանսական հաշվետվությունների հիմքում ընկած գործարքների և դեպքերի ճշմարիտ ներկայացումը:

Մենք, ի թիվս այլ հարցերի, ղեկավարությանը տեղեկացնում ենք աուդիտի առաջադրանքի պլանավորված շրջանակի և ժամկետների, ինչպես նաև աուդիտի ընթացքում հայտնաբերված նշանակալի հարցերի, ներառյալ՝ ներքին հսկողությանը վերաբերող նշանակալի թերությունների մասին:

Եզրակացություն իրավական այլ պահանջներին համապատասխանելու վերաբերյալ

Վարկային Համաձայնագրերի պահանջների պահպանման նպատակով, ՀՏՋՀ-ի ղեկավարությունը պետք է ապահովի, որ.

1. Ֆոնդերն օգտագործվել են Հայաստանի Հանրապետության և Վերակառուցման և Զարգացման Միջազգային Բանկի (ՎՋՄԲ) միջև կնքված Վարկային Համաձայնագրում նշված պայմաններին և Համաշխարհային Բանկի համապատասխան ուղեցույցներին համապատասխան՝ պատշաճ ուշադրություն դարձնելով տնտեսմանը և արդյունավետությանը, և միայն այն նպատակներով, որոնց համար հատկացվել են:
2. Փոխհատուցման դիմումներում ներկայացված ծախսերը ապահովված են համապատասխան հիմնավորող փաստաթղթերով, գրանցումներով և հաշիվներով: Փոխհատուցման դիմումներում ներառված և փոխհատուցված ծախսերը ընդունելի են ֆինանսավորման համար՝ համաձայն Վարկային Համաձայնագրի: ՀՏՋՀ-ի կողմից հաշվետու տարվա վերաբերյալ ներկայացված Միջանկյալ Ֆինանսական Հաշվետվությունները համապատասխանում են հաշվապահական գրանցումներին:
3. Նպատակային հաշիվները վարվել են համաձայն Վարկային Համաձայնագրի պայմանների և Համաշխարհային Բանկի համապատասխան ուղեցույցների:
4. Ֆինանսավորվող աշխատանքները, ապրանքները և ծառայությունները ձեռք են բերվել համաձայն Վարկային Համաձայնագրի պայմանների և Համաշխարհային Բանկի համապատասխան ուղեցույցների:

Մեր կարծիքով, 2019թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա ընթացքում ՀՏՋՀ-ի ղեկավարությունը պահպանել է նշված պահանջները:

"Բի-Դի-Օ Արմենիա" ՓԲԸ
28 հուլիսի, 2020թ.

Վահագն Սահակյան, FCCA
Տնօրեն

Գնել Խաչատրյան, FCCA
Աուդիտի ղեկավար

BDO

ԴՐԱՄԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՍՈՒՏՔԵՐԻ ԵՎ ՎՃԱՐՈՒՄՆԵՐԻ ՄԱՍԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

Սոցիալական Ներդրումների և Տեղական Զարգացման ծրագիր
ՎԶՄԲ վարկ 8483-AM
2019թ. դեկտեմբերի 31-ին ավարտվող տարվա վերաբերյալ
ԱՄՆ դոլար

Հոդվածներ	Մեթ.	Փաստացի		Նախատեսված		Շեղում	
		Հաշվետու տարի	Ամբողջական առ 31.12.2019	Հաշվետու տարի	Ամբողջական առ 31.12.2019	Հաշվետու տարի	Ամբողջական առ 31.12.2019
Դրամական միջոցների սկզբնական մնացորդ	6	1,118,505	-				
Ֆոնդերի աղբյուրներ	9						
ՎԶՄԲ վարկ 8483-AM		3,650,424	21,271,181				
ՀՀ Կառավարության համաֆինանսավորում		1,353,446	7,635,614				
Համայնքների ներդրումներ		243,891	1,782,456				
Հովանավորների ներդրումներ		-	73,284				
Ընդամենը		5,247,761	30,762,535				
Ֆոնդերի օգտագործում							
1. Աշխատանքներ, ապրանքներ և խորհրդատուների ծառայություններ՝ Ծրագրի Մաս Ա.-ի գծով		1,257,065	22,663,443	1,732,480	23,138,858	475,415	475,415
2. Աշխատանքներ, ապրանքներ և խորհրդատուների ծառայություններ՝ Ծրագրի Մաս Բ.-ի գծով		3,295,949	3,541,909	4,239,944	4,485,904	943,995	943,995
3. Ապրանքներ, խորհրդատուների ծառայություններ (ներառյալ՝ Ծրագրի աուդիտը) և դասընթացներ՝ Ծրագրի Մաս Գ.-ի գծով		7,202	166,024	118,796	277,618	111,594	111,594
4. Գործառնական ծախսեր՝ Ծրագրի Մաս Գ.-ի գծով		597,194	3,103,983	664,382	3,171,171	67,188	67,188
5. Նախնական վճար		-	75,000	-	75,000	-	-
Ընդամենը	10	5,157,410	29,550,359	6,755,602	31,148,551	1,598,192	1,598,192
Այլ մուտք/(ելք), զուտ	7	(34,931)	(34,931)				
Արտարժույթի տարբերությունից օգուտ		6,163	2,843				
Դրամական միջոցների վերջնական մնացորդ	6	1,180,088	1,180,088				

Հաստատուն եկամտակների ծրագրի ֆինանսական հաշվետվությունները հաստատվել և ստորագրվել են Հայաստանի Տարածքային Զարգացման Հիմնադրամի ղեկավարության կողմից 2020թ. հուլիսի 28-ին: Կից ծանոթագրությունները ծրագրի հատուկ նպատակների ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասն են:

Արթուր Սողոմոնյան
Գործադիր տնօրեն

Լևոն Դուլյան
Ֆինանսավարչական տնօրեն

ԸՍՏ ԾՐԱԳՐԻ ԲԱՂԱԴՐԻՉՆԵՐԻ ՖՈՆԴԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՄԱՍԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

Սոցիալական Ներդրումների և Տեղական Զարգացման ծրագիր
ՎԶՄԲ վարկ 8483-AM
2019թ. դեկտեմբերի 31-ին ավարտվող տարվա վերաբերյալ
ԱՄՆ դոլար

Ծրագրի բաղադրիչներ	Փաստացի		Նախատեսված		Շեղում	
	Հաշվետու տարի	Ամբողջական առ 31.12.2019	Հաշվետու տարի	Ամբողջական առ 31.12.2019	Հաշվետու տարի	Ամբողջական առ 31.12.2019
Մաս Ա. Օժանդակություն Տեղական Սոցիալ-Տնտեսական Զարգացմանը և Կարողությունների Ստեղծմանը	**1,257,065**	**22,663,443**	**1,732,480**	**23,138,858**	**475,415**	**475,415**
Ա.1. Աշխատանքներ	1,126,069	20,355,820	1,575,115	20,804,866	449,046	449,046
Ա.2. Միկրո-ծրագրերի համար ապրանքներ	93,350	754,074	82,211	742,935	(11,139)	(11,139)
Ա.3. Միկրո-ծրագրերի համար խորհրդատուների ծառայություններ և դասընթացներ	37,646	1,553,549	75,154	1,591,057	37,508	37,508
Մաս Բ. Օժանդակություն Միջհամայնքային Սոցիալական և Տնտեսական Զարգացումներին Միտված Նախաձեռնություններին	**3,295,949**	**3,541,909**	**4,239,944**	**4,485,904**	**943,995**	**943,995**
Բ.1. Աշխատանքներ			431,610	431,610	431,610	431,610
Բ.2. Ենթածրագրերի համար ապրանքներ	3,295,949	3,541,909	3,777,258	4,023,218	481,309	481,309
Բ.3. Ենթածրագրերի համար խորհրդատուների ծառայություններ և դասընթացներ			31,076	31,076	31,076	31,076
Մաս Գ. Ինստիտուցիոնալ Հզորացում և Ծրագրի ղեկավարում	**604,396**	**3,270,007**	**783,178**	**3,448,789**	**178,782**	**178,782**
Գ.1. Ծրագրի Մոնիտորինգ և Գնահատում, և Աշխատակազմի Կարողությունների Զարգացում	7,202	45,846	118,796	157,440	111,594	111,594
Գ.2. ՀՄՆՀ-ից ՀՏՁՀ-ի անցման օժանդակում	-	-	-	-	-	-
Գ.3.. ՀՏՁՀ-ի համար ապրանքներ	-	120,178	-	120,178	-	-
Գ.4 Գործառնական ծախսեր	597,194	3,103,983	664,382	3,171,171	67,188	67,188
Նախնական վճար	-	75,000	-	75,000	-	-
Ընդամենը	**5,157,410**	**29,550,359**	**6,755,602**	**31,148,551**	**1,598,192**	**1,598,192**

Հատուկ նպատակների ծրագրի ֆինանսական հաշվետվությունները նշանակալի և ստորագրվել են Հայաստանի Տարածքային Զարգացման Հիմնադրամի ղեկավարության կողմից 2020թ. հուլիսի 28-ին: Կից ծանոթագրությունները ծրագրի հաշվեկշիռների ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասն են:

Արթուր Սողոմոնյան
Գործադիր տնօրեն

Լևոն Դուլյան
Ֆինանսավարչական տնօրեն

ՀԱՏՈՒԿ ՆՊԱՏԱԿՆԵՐԻ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ԿԻՑ ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Սոցիալական Ներդրումների և Տեղական Զարգացման ծրագիր
ՎԶՄԲ վարկ 8483-AM
2019թ. դեկտեմբերի 31-ին ավարտվող տարվա վերաբերյալ

1. Ընդհանուր տեղեկություններ

1.1. Ծրագրի ֆինանսավորումը

Համաձայն 2015թ. ապրիլի 8-ին Հայաստանի Հանրապետության և Վերակառուցման և Զարգացման Միջազգային Բանկի (ՎԶՄԲ) միջև կնքված 8483-AM վարկային համաձայնագրի՝ ՎԶՄԲ-ն Հայաստանի Հանրապետությանն է տրամադրել 30,000,000 USD (ԱՄՆ դոլար) գումար:
Վարկը տրամադրվել է իրականացնելու «Սոցիալական Ներդրումների և Տեղական Զարգացման ծրագիրը» (Ծրագիր):
Վարկային համաձայնագիրը ուժի մեջ է մտել 22.09.2015թ.-ին:

ՎԶՄԲ 8483-AM վարկի համար ծախսերի կատարման վերջնաժամկետ է սահմանված 2021թ.-ի դեկտեմբերիի 31-ը:
Մինչև փակման ամսաթիվը կատարված ծախսերը ներկայացնելու արտոնյալ ժամկետ է սահմանված փակման ամսաթվից հետո չորս ամիս՝ 30.04.2022թ.-ը:

1.2 Ծրագրի նպատակը

Ծրագրի նպատակն է համայնքային և միջհամայնքային ենթակառուցվածքների որակի և հասանելիության բարելավումը:

Ծրագիրը բաղկացած է հետևյալ մասերից.

Մաս Ա. Օժանդակություն Տեղական Սոցիալ-Տնտեսական Զարգացմանը և Կարողությունների Ստեղծմանը.

1. Համայնքային Միկրո-ծրագրերի իրականացում՝ Ծրագրի Իրականացման Կոմիտեի (ԾԻԿ) օժանդակությամբ, ներառյալ՝ ա/ հիմնական համայնքային ենթակառուցվածքների (կրթական, առողջապահական և սոցիալական ծառայությունների) կառուցում, վերանորոգում կամ ընդլայնում; բ/ ջրամատակարարման և ջրահեռացման համակարգերի տեղադրում կամ հիմնանորոգում; գ/ գյուղերում ոռոգման և էլեկտրաֆիկացման փոքր աշխատանքների իրականացում և դ/ պետական ենթակառուցվածքների համար էներգախնայողության լուծումների տեղադրում:
2. Տրամադրել. ա/ տեխնիկական օժանդակություն՝ ապահովելու համար Միկրո-ծրագրերի պատշաճ նախագծումը և վերահսկողությունը; և բ/ համայնքներում ինստիտուցիոնալ և ֆինանսական կարողությունների ստեղծում:
3. Գույքի և սարքավորումների տրամադրում՝ Միկրո-ծրագրերի շահառու ենթակառուցվածքներին, ինչպիսիք են վերականգնված դպրոցները, մանկապարտեզները և համայնքային կենտրոնները. ինչպես նաև այլ սոցիալական ենթակառուցվածքների համար՝ Գործառնական ձեռնարկում սահմանված չափանիշներին համապատասխան:

Մաս Բ. Օժանդակել Միջհամայնքային Սոցիալական և Տնտեսական Զարգացումներին Միտված Նախաձեռնություններին.

1. Հայաստանի տարածքային բարեփոխումներին օժանդակություն՝ նորարարական նախաձեռնությունների իրականացմամբ (Ենթածրագրեր):
2. Տրամադրել. ա/ տեխնիկական օժանդակություն՝ ապահովելու համար Ենթածրագրերի պատշաճ նախագծումը և վերահսկողությունը; և բ/ համայնքներում ինստիտուցիոնալ և ֆինանսական կարողությունների ստեղծում:
3. Գույքի և սարքավորումների տրամադրում՝ Ենթածրագրերի շահառու ենթակառուցվածքներին:

Մաս Գ. Ինստիտուցիոնալ Հզորացում և Ծրագրի Ղեկավարում

Ինստիտուցիոնալ օժանդակության ապահովում, կարողությունների ստեղծում և տեխնիկական աջակցություն ՀՆՍՀ/ՀՏՋՀ-ին՝ Ծրագրի կառավարման, ֆիդուցիար վերահսկողության, երաշխիքների վերահսկողության, վերապատրաստման անցկացման և այս ամենի համար պահանջվող Գործառնական ծախսերի ապահովման համար:

1.3 Բյուջե

Ծրագիրը ֆինանսավորվում է.

- ԿԶՄԲ 8483-AM վարկով,
- ՀՀ Կառավարության համաֆինանսավորմամբ,
- Համայնքների ներդրումով
- Հովանավորների ներդրումներով և այլ եկամուտներով:

Ծախսային հոդված	ԿԶՄԲ 8483-AM վարկ*	ՀՀ Կառավարություն	Համայնքների ներդրում	Հովանավորների ներդրումներ և այլն	Ընդամենը	Վարկով ֆինանսավորվող մասնաբաժին (ներառյալ հարկերը)
	ԱՄՆ դոլար	ԱՄՆ դոլարին համարժեք	ԱՄՆ դոլարին համարժեք	ԱՄՆ դոլարին համարժեք	ԱՄՆ դոլար	
1. Աշխատանքներ, ապրանքներ և խորհրդատուների ծառայություններ՝ Ծրագրի Մաս Ա.-ի գծով	17,958,000	5,640,200	1,290,000	74,000	24,962,200	72.15%
2. Աշխատանքներ, ապրանքներ և խորհրդատուների ծառայություններ՝ Ծրագրի Մաս Բ.-ի գծով	10,100,000	2,741,000	625,000	-	13,466,000	75.00%
3. Ապրանքներ, խորհրդատուների ծառայություններ (ներառյալ՝ Ծրագրի աուդիտը) և դասընթացներ՝ Ծրագրի Մաս Գ.-ի գծով	215,000	81,800	-	-	296,800	72.45%
4. Գործառնական ծախսեր՝ Ծրագրի Մաս Գ.-ի գծով	1,652,000	2,548,000	-	-	4,200,000	50% (Y2015), 45% (Y2016), 40% (Y2017), 35% (Y2018), 30% after.
5. Նախնական վճար	75,000	-	-	-	75,000	100%
Ընդամենը	30,000,000	11,011,000	1,915,000	74,000	43,000,000	

(*) Բյուջեն թարմացվել է Վարկային Պայմանագրի 2020թ.-ի մարտի 26-ի լրացումով:

1.4 Ծրագրի իրականացում

Ծրագիրը իրականացվում է Հայաստանի Տարածքային Զարգացման Հիմնադրամի (ՀՏԶՀ) կողմից (նախկինում անվանվում էր Հայաստանի Սոցիալական Ներդրումների Հիմնադրամ (ՀՍՆՀ)):
ՀՍՆՀ-ը հիմնադրվել է միակ հիմնադիր Հայաստանի Հանրապետության Կառավարության 11.04.2000թ. N 162 որոշումով՝ որպես անկախ, շահույթ չհետապնդող կազմակերպություն՝ համայնքի նախաձեռնության և պահանջարկի հիման վրա գործունեության միջոցով փոքրածավալ ենթակառուցվածքների վերականգնմանը աջակցման համար:

ՀՏԶՀ-ն իրականացնում է ՀԲ-ի և այլ դոնորների կողմից ֆինանսավորվող ծրագրեր՝ նպաստելով.

- բնակչության կենսամակարդակի բարձրացմանը՝ սոցիալական և տնտեսական ենթակառուցվածքների և հանրային ծառայությունների, աշխատանքի, ներդրումային գործունեության որակի և հասանելիության բարելավման միջոցով,
- ՀՀ-ի տարածաշրջանների ինստիտուցիոնալ և ֆինանսական հզորացմանը:

Հոգաբարձուների Խորհուրդը ՀՏԶՀ-ի բարձրագույն կառավարման մարմինն է:

ՀՏԶՀ-ի գրանցման հասցեն է՝ ՀՀ, Երևան, 0037, Կ. Ուլնեցու 31:

2. Հաշվապահական հաշվառման քաղաքականության ամփոփ

2.1 Ֆինանսական հաշվետվությունների պատրաստում և ներկայացում

Ծրագրի հատուկ նպատակների ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են Հաշվապահների Միջազգային Դաշնության (ՀՄԴ) ներքո գործող Հանրային Հատվածի Հաշվապահական Հաշվառման Միջազգային Ստանդարտների Խորհրդի (ՀՀՀՀՄՍԽ) կողմից հրապարակված «Ֆինանսական հաշվետվություններ հաշվապահական հաշվառման դրամային միջոցների սկզբունքով» Հանրային Հատվածի Հաշվապահական Հաշվառման Միջազգային Ստանդարտների և ներկայացվել են Համաշխարհային Բանկի կողմից ֆինանսավորվող ներդրումային գործառնությունների Ֆինանսական Ձեռնարկի՝ «RM 3 - Ֆինանսական Հաշվետվողականություն և Աուդիտ»-ի (մարտ 2010) համաձայն:
Այս հատուկ նպատակների ֆինանսական հաշվետվությունները պատրաստելիս կիրառվել է ստորև ներկայացված հաշվապահական հաշվառման քաղաքականությունը: Հաշվապահական հաշվառման քաղաքականությունը կիրառվել է հետևողականորեն:

2.2 Հաշվապահական հաշվառման դրամային միջոցների սկզբունք

Այս հատուկ նպատակների ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել և ներկայացվել են, կիրառելով հաշվապահական հաշվառման դրամային միջոցների սկզբունքը:
Հաշվապահական հաշվառման դրամային միջոցների սկզբունքի կիրառման դեպքում գործարքները և այլ դեպքերը ճանաչվում են միայն այն դեպքում, երբ դրամական միջոցը կամ համարժեքը ստացվել է կամ վճարվել:
Դրամային միջոցների սկզբունքով պատրաստված ֆինանսական հաշվետվությունները տրամադրում են տեղեկատվություն ժամանակաշրջանում ստացված դրամական միջոցների, դրամական միջոցների օգտագործման ուղղությունների և հաշվետու ամսաթվի դրությամբ դրամական միջոցների մնացորդների վերաբերյալ:

2.3 Ներկայացման արժույթը

Այս հատուկ նպատակների ֆինանսական հաշվետվությունների ներկայացման արժույթը ԱՄՆ դոլարն է (USD):

2.4 Գործարքներ արտարժույթով

Արտարժույթը Ծրագրի ներկայացման արժույթից տարբերվող արժույթն է:

Ծրագրի բանկային հաշիվները վարվում են ԱՄՆ դոլարով և ՀՀ դրամով:
Արտարժույթով իրականացված գործարքները փոխարկվում են ֆունկցիոնալ արժույթի՝ գործարքի օրվա դրությամբ սահմանված փոխարժեքով: Որպես փոխարժեք ընդունվում է Հայաստանի Հանրապետության Կենտրոնական բանկի կողմից հրապարակված արժութային շուկայում արտարժույթի նկատմամբ ֆունկցիոնալ արժույթի միջին փոխարժեքը:
ՀՀ դրամով արտահայտված Հայաստանի Հանրապետության Կառավարության, Համայնքների և այլ Հովանավորների ներդրումները և ՀՀ դրամով արտահայտված ծախսերի վճարումները կապալառուներին և այլ մատակարարներին ներկայացվում են ԱՄՆ դոլարով՝ յուրաքանչյուր փոխանցման օրվա ՀՀ Կենտրոնական բանկի սահմանված փոխարժեքով:

31.12.2018թ. դրությամբ ՀՀ Կենտրոնական բանկի կողմից սահմանված պաշտոնական փոխարժեքն է՝ 1 ԱՄՆ դոլար = 483.76 դրամ:
31.12.2019թ. դրությամբ ՀՀ Կենտրոնական բանկի կողմից սահմանված պաշտոնական փոխարժեքն է՝ 1 ԱՄՆ դոլար = 479.70 դրամ:

2.5 Ծրագրի բյուջե

Ֆինանսավորման և ծախսումների տարեկան բյուջեները հիմնված են ծրագրի համաձայնագրի հաստատված բյուջեի վրա (ծնթ. 1.3):
Ծախսումների բյուջեն ստեղծվել է վերջին ժամանակահատվածի փաստացի կուտակված ծախսերի հիման վրա՝ գումարած տվյալ ժամանակահատվածի փոփոխված գնումների պլանը:

2.6 Հարկեր

Ծրագրի շրջանակներում հարկերը վճարվում են Հայաստանի Հանրապետության հարկային օրենսդրության ընդհանուր կարգով:

3. Վարկային միջոցների առհանումների հաշվետվություն (Summary report և SOE)

ՎՋՄԲ վարկ 8483-ԱՄ
2019թ. դեկտեմբերի 31-ին ավարտվող տարվա վերաբերյալ
ԱՄՆ դոլար

Դիմումի համար	Ամսաթիվը	Ծախսային հոդվածներ				Ընդամենը
		1. Աշխատանքներ, ապրանքներ և խորհրդատուների ծառայություններ՝ Ծրագրի Մաս Ա.-ի գծով	2. Աշխատանքներ, ապրանքներ և խորհրդատուների ծառայություններ՝ Ծրագրի Մաս Բ.-ի գծով	3. Ապրանքներ, խորհրդատուների ծառայություններ (ներառյալ՝ Ծրագրի աուդիտը) և դասընթացներ՝ Ծրագրի Մաս Գ.-ի գծով	4.Գործառնական ծախսեր՝ Ծրագրի Մաս Գ.-ի գծով	
38	26.02.2019	682,390.81	184,470.01	-	48,332.48	915,193.30
39	04.04.2019	77,972.10	85,238.82	-	25,436.97	188,647.89
40	25.04.2019	67,107.02	55,189.33	-	13,086.46	135,382.81
41	20.05.2019	57,273.07	191,259.40	-	13,530.87	262,063.34
42	10.07.2019	57,140.51	86,091.84	-	13,729.03	156,961.38
43	15.08.2019	105,586.95	127,150.57	-	15,188.21	247,925.73
44	21.08.2019	99,518.99	6,297.10	5,218.13	14,205.47	125,239.69
45	25.09.2019	133,156.13	176,973.89	-	14,480.49	324,610.51
46	02.12.2019	107,971.91	659,945.74	-	27,635.82	795,553.47
47	20.12.2019	118,096.15	364,867.77	-	15,881.54	498,845.46
Ընդամե		1,506,213.64	1,937,484.47	5,218.13	201,507.34	3,650,423.58

4. Նպատակային հաշվի հաշվետվություն

Հաշվեհամար	900000900283
Բանկ	Կենտրոնական գանձապետարան
Հասցե	Հայաստանի Հանրապետություն, Երևան 0010, Մելիք Ադամյան փ. 1,
Արժույթ	ԱՄՆ Դոլար

	ՎՋՄԲ վարկ 8483-ԱՄ
1. Սկզբնական մնացորդն առ 01.01.2019թ.	784,845
2. *Ավելացում.* Սկզբնական տարբերություն	267
3. ՀԲ ֆոնդի կանխավճար/համալրում	3,650,424
4. *Նվազեցում.* նպատակային հաշվից վերադարձ ՀԲ-ին	-
5. Նպատակային հաշվին համալրված գումարը	**4,435,536**
6. Նպատակային հաշվի վերջնական մնացորդն առ 31.12.2019թ.	871,912
7. *Ավելացում.* վճարված ընդունելի ծախսերի գումար	3,563,305
8. *Նվազեցում.* Ստացված տոկոսներ (եթե կրեդիտագրվել են նպատակային հաշիվ)	-
9. Ընդամենը հաշվառված համալրում	**4,435,217**
10. Վերջնական տարբերություն (5)-(9)	319

5. Ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն

Ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունը բացահայտում է Ծրագրի ակտիվները, պարտավորությունները և զուտ ակտիվները հաշվետու ամսաթվի դրությամբ: Ներկայացված է հաշվեգրման հիմունքով, համաձայն որի՝ գործարքները ճանաչվում են, երբ տեղի են ունենում (այլ ոչ միայն, երբ դրամական միջոցները ստացվում կամ վճարվում են):

	Ծնթ.	31.12.2019 ԱՄՆ դոլար	31.12.2018 ԱՄՆ դոլար
ԱԿՏԻՎՆԵՐ			
Դրամական միջոցներ	6	1,180,088	1,118,505
Կանխավճարներ և ստացվելիք գումարներ	7	34,931	167,621
ԸՆԴԱՄԵՆԸ ԱԿՏԻՎՆԵՐ		1,215,019	1,286,126
ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ			
Վճարվելիք գումարներ	8	69,596	138,926
Ընդամենը պարտավորություններ		69,596	138,926
ԶՈՒՏ ԱԿՏԻՎ			
Աճողական եկամուտ			
Ֆոնդեր			
ՎԶՄԲ 8483-ԱՄ	9	21,271,181	17,620,757
ՀՀ Կառավարության համաֆինանսավորում		7,635,614	6,282,168
Համայնքների ներդրումներ		1,782,456	1,538,565
Հովանավորների ներդրումներ		73,284	73,284
Ընդամենը ֆոնդեր		30,762,535	25,514,774
Աճողական ծախսեր			
Ծրագրի ծախսեր		(29,619,955)	(24,364,254)
		(29,619,955)	(24,364,254)
Արտարժույթի տարբերությունից օգուտ/(կորուստ)		2,843	(3,320)
ԸՆԴԱՄԵՆԸ ԶՈՒՏ ԱԿՏԻՎՆԵՐ		1,145,423	1,147,200

6. Դրամական միջոցներ

Հաշիվ	Բանկ	Արժույթ	31.12.2019 ԱՄՆ դոլար	31.12.2018 ԱՄՆ դոլար
Նպատակային հաշիվ (IBRD) Loan 8483-AM)	Գանձապետարան	ԱՄՆ դոլար	871,912	784,845
Համայնքների ներդրումների	Արարատ բանկ	ՀՀ Դրամ	194,780	333,642
Համայնքների ներդրումների	Գանձապետարան	ՀՀ Դրամ	113,377	-
Հովանավորների ներդրումներ	Արարատ բանկ	ՀՀ Դրամ	19	18
			1,180,088	1,118,505

7. Կանխավճարներ և ստացվելիք գումարներ

	31.12.2019 ԱՄՆ դոլար	31.12.2018 ԱՄՆ դոլար
Կանխավճարներ աշխատանքների գծով	-	167,621
Այլ ծրագրին փոխանցված գումար*	34,931	-
	34,931	167,621

(*) Համայնքների ներդրումների հաշվից փոխանցվել է այլ ծրագրին: Գումարը վերականգնվել է 2020-ին:

8. Վճարվելիք գումարներ

	31.12.2019 ԱՄՆ դոլար	31.12.2018 ԱՄՆ դոլար
Աշխատանքների գծով (պահումներ)*	69,596	138,839
Այլ	-	87
	69,596	138,926

(*) Պահումները կատարվում են շինարարական աշխատանքների գծով ներկայացված հաշիվների 5%-ի չափով՝ որպես կատարված աշխատանքների որակի երաշխիք, որից 2.5%-ը վճարվում է աշխատանքների ավարտական ակտը ստորագրելուց հետո, իսկ մնացած 2.5%-ը պահվում է մինչև մեկ տարի ժամկետով՝ որպես կատարված աշխատանքների որակի երաշխիք կամ վճարվում է մեկ տարի ժամկետ ունեցող բանկային երաշխիքի հիման վրա:

9. Ֆոնդեր

9.1. ՎՁՄԲ 8483-ԱՄ վարկ

	31.12.2019թ. ավարտվող տարի ԱՄՆ դոլար	Կուտակային առ 31.12.2019թ. ԱՄՆ դոլար
Կանխավճար/ (կանխավճարի մարում)	-	1,700,000
SOE ընթացակարգեր, Առհանումների հաշվետվություններ	3,650,424	19,496,181
Նախնական վճար	-	75,000
Ընդամենը	3,650,424	21,271,181
Ընդամենը ֆինանսավորման բյուջեի 31.12.2019թ.-ի դրությամբ հատկացված ֆինանսավորման տոկոսը		30,000,000 71%

9.2. ՀՀ Կառավարության համաֆինանսավորում

	31.12.2019թ. ավարտվող տարի ԱՄՆ դոլար	Կուտակային առ 31.12.2019թ. ԱՄՆ դոլար
Ներդրումներ դրամական միջոցներով	1,353,446	7,635,614
Ընդամենը	1,353,446	7,635,614
Ընդամենը ֆինանսավորման բյուջեի 31.12.2019թ.-ի դրությամբ հատկացված ֆինանսավորման տոկոսը		11,011,000 69%

9.3. Համայնքների ներդրումներ

	31.12.2019թ. ավարտվող տարի ԱՄՆ դոլար	Կուտակային առ 31.12.2019թ. ԱՄՆ դոլար
Ներդրումներ դրամական միջոցներով	243,891	1,782,456
Ընդամենը	243,891	1,782,456
Ընդամենը ֆինանսավորման բյուջեի 31.12.2019թ.-ի դրությամբ հատկացված ֆինանսավորման տոկոսը		1,915,000 93%

9.4. Հովանավորների ներդրումներ և այլն

	31.12.2019թ. ավարտվող տարի ԱՄՆ դոլար	Կուտակային առ 31.12.2019թ. ԱՄՆ դոլար
Ներդրումներ դրամական միջոցներով	-	73,284
Ընդամենը	-	**73,284**
Ընդամենը ֆինանսավորման բյուջեի 31.12.2019թ.-ի դրությամբ հատկացված ֆինանսավորման տոկոսը		74,000
		99%

10. Ծրագրի կուտակային ծախսեր

10.1. Ծրագրի ծախսումները ըստ ֆինանսավորման աղբյուրների

ԱՄՆ դոլար

Հոդված	31.12.2019թ.-ին ավարտվող տարի				
	ՎԶՄԲ 8483-AM վարկ	ՀՀ Կառավարություն	Համայնքների ներդրում	Հովանավորներ և այլն	Ընդամենը
1. Աշխատանքներ, ապրանքներ և խորհրդատուների ծառայություններ՝ Ծրագրի Մաս Ա.-ի գծով	906,971	279,072	71,022	-	1,257,065
2. Աշխատանքներ, ապրանքներ և խորհրդատուների ծառայություններ՝ Ծրագրի Մաս Բ.-ի գծով	2,471,960	659,189	164,799	-	3,295,948
3. Ապրանքներ, խորհրդատուների ծառայություններ (ներառյալ՝ Ծրագրի աուդիտը) և Դասընթացներ՝ Ծրագրի Մաս Գ.-ի գծով	5,218	1,984	-	-	7,202
4. Գործառնական ծախսեր՝ Ծրագրի Մաս Գ.-ի գծով	179,155	418,030	10	-	597,195
5. Նախնական վճար	-	-	-	-	-
Ընդամենը	**3,563,304**	**1,358,275**	**235,831**	**-**	**5,157,410**

Հոդված	Կուտակային առ 31.12.2019թ.				
	ՎԶՄԲ 8483-AM վարկ	ՀՀ Կառա-վարություն	Համայնքների ներդրում	Հովանավորներ և այլն	Ընդամենը
1. Աշխատանքներ, ապրանքներ և խորհրդատուների ծառայություններ՝ Ծրագրի Մաս Ա.-ի գծով	16,299,230	5,028,089	1,263,335	72,789	22,663,443
2. Աշխատանքներ, ապրանքներ և խորհրդատուների ծառայություններ՝ Ծրագրի Մաս Բ.-ի գծով	2,656,431	708,381	177,097	-	3,541,909
3. Ապրանքներ, խորհրդատուների ծառայություններ (ներառյալ՝ Ծրագրի աուդիտը) և Դասընթացներ՝ Ծրագրի Մաս Գ.-ի գծով	120,284	45,740	-	-	166,024
4. Գործառնական ծախսեր՝ Ծրագրի Մաս Գ.-ի գծով	1,245,309	1,857,637	996	41	3,103,983
5. Նախնական վճար	75,000	-	-	-	75,000
Ընդամենը	**20,396,254**	**7,639,847**	**1,441,428**	**72,830**	**29,550,359**

10.2. Ծրագրի բյուջեի կատարում

Հոդված	Կուտակային առ 31.12.2019թ.	Բյուջե	Կատարում
	USD	USD	%
1. Աշխատանքներ, ապրանքներ և խորհրդատուների ծառայություններ՝ Ծրագրի Մաս Ա.-ի գծով	22,663,443	24,962,200	91%
2. Աշխատանքներ, ապրանքներ և խորհրդատուների ծառայություններ՝ Ծրագրի Մաս Բ.-ի գծով	3,541,909	13,466,000	26%
3. Ապրանքներ, խորհրդատուների ծառայություններ (ներառյալ՝ Ծրագրի առդիտը) և Դասընթացներ՝ Ծրագրի Մաս Գ.-ի գծով	166,024	296,800	56%
4. Գործառնական ծախսեր՝ Ծրագրի Մաս Գ.-ի գծով	3,103,983	4,200,000	74%
5. Նախնական վճար	75,000	75,000	100%
Ընդամենը	29,550,359	43,000,000	69%

11. Հաշվետու ամսաթվից հետո դեպքեր

11.1. Փոխհատուցման դիմումներ

Հաշվետու ժամանակաշրջանին վերաբերող 828,074.22 USD ծախսումներ ներառող N 48 առհանման դիմումը ներկայացվել է ՀԲ-ին 13.02.2020թ.-ին և հաստատվել 14.02.2020թ.-ին:

11.2. Կորոնավիրուսի համաճարակ

Հաշվի առնելով նոր տիպի կորոնավիրուսի (COVID-19) համաճարակի լայն աշխարհագրական տարածումը 2020թ.-ի ընթացքում, ինչպես նաև Հայաստանի ամբողջ տարածքում, ՀՀ Կառավարությունը սահմանել է արտակարգ դրություն 2020 թվականի մարտի 16-ից մինչև օգոստոսի 12-ը: Ծրագրի ղեկավարությունը գտնում է, որ ստեղծված իրավիճակը կարող է անբարենպաստ ազդեցություն ունենալ Ծրագրի վրա, մասնավորապես այն կարող է հանգեցնել.

- Աշխատանքների իրականացման ժամկետների վրա,
- Ծրագրի համակարգման դժվարությունների, և
- Սահմանափակումներից բխող այլ բացասական հետևանքներ:

Ելնելով իրադարձությունների զարգացման անկանխատեսելիությունից՝ Ծրագրի ղեկավարությունը հնարավոր չէ համարում գնահատել վերոնշյալ դեպքի ֆինանսական հետևանքը հաշվետվությունների վրա:

ՀԱՎԵԼՎԱԾ 1. ԾՐԱԳՐԻ ԿՈՂՄԻՑ ՎՃԱՐՎԱԾ ԳՈՒՄԱՐՆԵՐԻ ԵՎ ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ԲԱՆԿԻ ՓՈԽՀԱՏՈՒՑՈՒՄՆԵՐԻ ՀԱՄԱԴՐՈՒՄ

Սոցիալական Ներդրումների և Տեղական Զարգացման ծրագիր
ՎԶՄԲ վարկ 8483-AM
2019թ. դեկտեմբերի 31-ին ավարտվող տարվա վերաբերյալ
ԱՄՆ դոլար

Ծախսային հոդված	Դիմում	ՀՏՁՀ	ՀԲ	Տարբերություն
1. Աշխատանքներ, ապրանքներ և խորհրդատուների ծառայություններ՝ Ծրագրի Մաս Ա.-ի գծով	38	682,390.81	682,390.81	-
	39	77,972.10	77,972.10	-
	40	67,107.02	67,107.02	-
	41	57,273.07	57,273.07	-
	42	57,140.51	57,140.51	-
	43	105,586.95	105,586.95	-
	44	99,518.99	99,518.99	-
	45	133,156.13	133,156.13	-
	46	107,971.91	107,971.91	-
	47	118,096.15	118,096.15	-
		1,506,213.64	**1,506,213.64**	
2. Աշխատանքներ, ապրանքներ և խորհրդատուների ծառայություններ՝ Ծրագրի Մաս Բ.-ի գծով	38	184,470.01	184,470.01	-
	39	85,238.82	85,238.82	-
	40	55,189.33	55,189.33	-
	41	191,259.40	191,259.40	-
	42	86,091.84	86,091.84	-
	43	127,150.57	127,150.57	-
	44	6,297.10	6,297.10	-
	45	176,973.89	176,973.89	-
	46	659,945.74	659,945.74	-
	47	364,867.77	364,867.77	-
		1,937,484.47	**1,937,484.47**	
3. Ապրանքներ, խորհրդատուների ծառայություններ (ներառյալ՝ Ծրագրի աուդիտը) և Դասընթացներ՝ Ծրագրի Մաս Գ.-ի գծով	44	5,218.13	5,218.13	-
		5,218.13	**5,218.13**	
4. Գործառնական ծախսեր՝ Ծրագրի Մաս Գ.-ի գծով	38	48,332.48	48,332.48	-
	39	25,436.97	25,436.97	-
	40	13,086.46	13,086.46	-
	41	13,530.87	13,530.87	-
	42	13,729.03	13,729.03	-
	43	15,188.21	15,188.21	-
	44	14,205.47	14,205.47	-
	45	14,480.49	14,480.49	-
	46	27,635.82	27,635.82	-
	47	15,881.54	15,881.54	-
		201,507.34	**201,507.34**	
Ընդամենը		**3,650,423.58**	**3,650,423.58**	